ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

N ԱԼԴ/454-25 «19» փետրվար, 2025թ.

«ԱՐԱՄԵ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՍԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

«ՏԵԿՏՈՆԻԿԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԲԱԲԱՅԱՆԻՆ

ՀՀ տարբեր մարզերում մի շարք դպրոցների վերանորոգման համար շենքերի չափագրման, ծավալաթերթ/թերությունների ակտերի և նախահաշիվների փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար իրականացվել է գնման թիվ ՀՏԶՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4 ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ), որի արդյունքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև Հիմնադրամ) և «Արամե» ՍՊԸ և «Տեկտոնիկա» ՍՊԸ կոնսորցիումի միջև 2024 թվականի սեպտեմբերի 12-ին կնքվել է «ՀՀ տարբեր մարզերում մի շարք դպրոցների վերանորոգման համար շենքերի չափագրման, ծավալաթերթ/թերությունների ակտերի և նախահաշիվների փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ ՀՏԶՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4-1 պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 12.02.2025թ. կայացված թիվ ԵԴ2/7259/02/24 վճռով վճռվել է.

«1. «Սեյսմշին» ՍՊԸ-ի, «Շին նախագիծ» ՍՊԸ–ի հայցն ընդդեմ «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի, երրորդ անձինք՝ «Տեկտոնիկա» ՍՊԸ–ի, «Արամե» ՍՊԸ–ի՝ գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 1.3 կետում լրացում կատարելուն, կոնսորցիումի հայտը բավարար գնահատելուն պարտավորեցնելու, թիվ 5 արձանագրության 3–րդ կետի 3.2–րդ ենթակետով և 4–րդ կետով կայացված որոշումներն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, բավարարել մասնակի.

պարտավորեցնել «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի գնահատող հանձնաժողովին թիվ ՀՏԶՀՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 16.08.2024 թվականին սկսված և 21.08.2024 թվականին ավարտված հայտերի գնահատման նիստի թիվ 5

Հայաստանի Հանրապետություն, 0037, Երևան, Կ. Ուլնեցու 31
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 0037, Republic of Armenia
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123

արձանագրության 1.3 կետում կատարել լրացում՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Մ-Բիլդ» ՍՊԸ-ի և Անդրանիկ Վլադիմիր Սիմոնյանի միջև աշխատանքային պայմանագիրը կնքվել է 06.02.2017թ., սակայն «Մ-Բիլդ» ՍՊԸ-ն գրանցվել է 15.06.2017թ. պայմանագրում նշվել է Անդրանիկ Սիմոնյանի 04.05.2018թ. տրված թիվ «AR 00671919» համարով անձնագիրը:

անվավեր ճանաչել թիվ ՀՏՋՀՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 16.08.2024 թվականին սկսված և 21.08.2024 թվականին ավարտված հայտերի գնահատման նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի 3.2-րդ ենթակետով կայացված որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել նաև նույն արձանագրության 5.2 կետով կայացված որոշումը:

անվավեր ճանաչել թիվ ՀՏՋՀՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 16.08.2024 թվականին սկսված և 21.08.2024 թվականին ավարտված հայտերի գնահատման նիստի թիվ 5 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշումը և որպես անվավերության հետևանք անվավեր ճանաչել նաև նույն արձանագրության 5.1 կետով կայացված որոշումը:

Հայցը՝ մնացած մասով, մերժել:»:

Հաշվի առնելով, որ վճիռը օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից, ենթակա է պարտադիր կատարման և ղեկավարվելով Պայմանագրի 7.3-րդ կետի դրույթներով՝ Հիմնադրամի և «Արամե» ՍՊԸ և «Տեկտոնիկա» ՍՊԸ կոնսորցիումի միջև 12.09.2024 թվականին կնքված թիվ ՀՏՋՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/4-1 պայմանագիրը 19.02.2025 թվականից համարվում է միակողմանիորեն լուծված:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ **Ս. ԲԱՂԻՆՅԱՆ**

Invalid signature

X

ՍԱՐԳԻՍ ԲԱՂԻՆՅԱՆ

Signed by: BAGHINYAN SARGIS 1404640118

Կատարող՝ Գնումների վարչության պետ
Լ. Սեդրակյան
Հեռախոս՝ +374 41 500 260